# ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

## 9-րդ դասարանի ավարտական քննության ուղեցույց

### Թեստի կառուցվածքը

«Կենսաբանություն» առարկայի 9-րդ դասարանի պետական ավարտական քննական թեստերում ընդգրկված են առարկայական ծրագրի ծավալին և բովանդակությանը համապատասխանող առաջադրանքներ:

Թեստը բաղկացած է 32 առաջադրանքից, որոնք, ըստ առաջադրանքների կառուցվածքային տեսակների և առաջադրանքներին տրվող միավորների, բաշխված են հետևյալ համամասնությամբ`

**Աղյուսակ 1**

**Քննական թեստի առաջադրանքների բաշխումն ըստ ներկայացման ձևի**

| Հ/հ | **Առաջադրանքները ըստ ներկայացման ձևի** | Առաջադրանքների քանակն ըստ մասերի | Առաջադրանքների բաշխումն ըստ միավորների |
|---|---|---|---|
| 1. | **ընտրովի պատասխանով** | 22 | 22 |
| 2. | **կարճ պատասխանով** | 8 | 8 |
| | **պնդումների փունջ** | 1 | 4 |
| 3. | **ընդարձակ պատասխանով** | 1 | 1 |
| | **ընդամենը** | **32** | **35** |

**Աղյուսակ 2**

**Առաջադրանքների բաշխումն ըստ ծրագրային նյութի բաժինների**

| Հ/հ | **ԹԵՄԱ** | **ՄԻԱՎՈՐԸ** |
|---|---|---|
| 1. | Կենդանի օրգանիզմների բազմազանությունը | 7 |
| 3. | Մարդ | 11 |
| 4. | Ընդհանուր օրինաչափություններ | 17 |
| | *Ընդամենը* | 35 |

**Քննական առաջադրանքների կառուցվածքային տեսակները, գնահատման չափանիշները և պատասխանների ձևաթղթի լրացման կարգը**

1. **Ընտրովի պատասխանով առաջադրանքներ**

   Ընտրովի պատասխաններ են պահանջում 1-22-րդ առաջադրանքները, որոնցից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավորով:

   Այս առաջադրանքներում ձևակերպվում է հարցը և տրվում է պատասխանի չորս տարբերակ, որոնցից պետք է ընտրել ճիշտը:

***Նմուշ***. Բարձրակարգ բույսերի ո՞ր բաժնին է պատկանում եղևնին:

1) գետնամամուռների
2) ծածկասերմերի
3) մերկասերմերի
4) ձիաձետերի

**Ձևաթուղթը լրացնելու կարգը:** Պատասխանների ձևաթղթում ընտրովի պատասխանով առաջադրանքներից յուրաքանչյուրի համարի ներքևում տրված են համապատասխան թվով վանդակներ: Տրված առաջադրանքի ճիշտ պատասխանը գտնելուց հետո անհրաժեշտ է տվյալ պատասխանի համարին համապատասխանող վանդակում դնել **«X»** նշանը: Օրինակ՝ եթե առաջին առաջադրանքի ճիշտ պատասխանը 3-րդն է, ապա ձևաթղթում պատասխանը պետք է նշել հետևյալ ձևով՝



**2.Կարճ պատասխանով առաջադրանքներ**

Կարճ պատասխան պահանջող առաջադրանքներում (23-30-րդ) անհրաժեշտ է գրել պահանջվող թիվը, բառը, բառակապակցությունը: Յուրաքանչյուր
ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր:

***Նմուշ.* Քանի՞ ողից է բաղկացած մարդու ողնաշարի կրծքային բաժինը:**

Պատասխան՝ ______________________________

**Ձևաթուղթը լրացնելու կարգը:** Պատասխանների ձևաթղթում կարճ պատասխանով առաջադրանքներից յուրաքանչյուրի համարի դիմաց տրված է վանդակ, որտեղ անհրաժեշտ է գրել ճիշտ պատասխանը: Օրինակ՝ եթե 24-րդ առաջադրանքի ճիշտ պատասխանը 12 է, ապա ձևաթղթում պատասխանը պետք է նշել հետևյալ ձևով՝



***3. Պնդումների փունջ***

***Պնդումների փնջում*** (31-րդ) տրված են կենսաբանական գործընթացների, երևույթների վերաբերյալ չորս պնդումներ, որոնցից յուրաքանչյուրին հնարավոր է տալ երեք տիպի պատասխան՝ «Ճիշտ է», «Սխալ է» կամ «Չգիտեմ»: Այս առաջադրանքից հնարավոր է վաստակել առավելագույնը 4 միավոր:

Յուրաքանչյուր պնդման դիմաց ճիշտ նշված «Ճիշտ է» կամ «Սխալ է» պատասխանի համար տրվում է մեկական միավոր: «Չգիտեմ» պատասխանի համար միավոր չի տրվում: Յուրաքանչյուր սխալ նշված «Ճիշտ է» կամ «Սխալ է» պատասխանի համար առաջադրանքին տրված միավորներից հանվում է մեկական միավոր: Եթե տրված և հանված միավորների քանակը հավասար է կամ հանված միավորների թիվը գերազանցում է տրված միավորների թիվն, ապա առաջադրանքի պատասխանը գնահատվում է 0: Այլ առաջադրանքներից վաստակած միավորներից որևէ միավոր չի հանվում:

***Նմուշ.* Տրված 4 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ճիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» տարբերակներից որևէ մեկը:**

1) Անսեռ բազմացման դեպքում սերունդների միջև կապը իրականացվում է գամետների միջոցով:

2) Հետերոզիգոտ առանձնյակներն առաջացնում են տարբեր տեսակի գամետներ և դրանց սերնդում նկատվում է ճեղքավորում:
3) Արտաքուստ անհետացող հատկանիշն անվանում են դոմինանտ:
4) Մարդու բջիջների կորիզում առկա են 46 զույգ քրոմոսոմներ:

**Ձևաթուղթը լրացնելու կարգը**: Տվյալ պնդման դիմացի երեք վանդակներից որևէ մեկում պետք է դնել «X» նշանը:

| 31 | 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|---|
| Ճիշտ է | | X | | |
| Սխալ է | X | | X | X |
| Չգիտեմ | | | | |

***Ընդարձակ պատասխան*** պահանջող առաջադրանքը մեկն է 32-րդը, որի ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր:

Ընտրովի պատասխանով առաջադրանքների համար պատասխանների ձևաթղթում կա ուղղման 2 հնարավորություն: Կարճ պատասխանով առաջադրանքների և պնդումների փնջի համար պատասխանների ձևաթղթում կա ուղղման 1-ական հնարավորություն:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Քննության տևողությունը 120 րոպե է:
Թեստ-գրքույկի դատարկ մասերը օգտագործվում են սևագրության համար:

**2022** *թ. 9-րդ դասարանի ավարտական քննություն*

***Պատասխանների ձևաթուղթ***

***Կենսաբանություն***

| *Եղե՛ք ուշադիր* | Ընտրովի պատասխանով առաջադրանքները կատարելու համար ձեր ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դրեք X նշանը (միևնույն սյունակում մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ): |
|---|---|

## Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

| Պատասխանի համարը | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | 1 |
| 2 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | 2 |
| 3 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | 3 |
| 4 | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | ☐ | 4 |

| Պատասխանի համարը | 21 | 22 |
|---|---|---|
| 1 | ☐ | ☐ |
| 2 | ☐ | ☐ |
| 3 | ☐ | ☐ |
| 4 | ☐ | ☐ |

Սխալ նշված պատասխանը փոխելու տեղը

| | ☐☐ | | ☐☐ |
|---|---|---|---|
| 1 | ☐ | 1 | ☐ |
| 2 | ☐ | 2 | ☐ |
| 3 | ☐ | 3 | ☐ |
| 4 | ☐ | 4 | ☐ |

## Կարճ պատասխանով առաջադրանքներ

| Առաջադրանքի համարը | | | |
|---|---|---|---|
| 23 | | 27 | |
| 24 | | 28 | |
| 25 | | 29 | |
| 26 | | 30 | |

Սխալ նշված պատասխանը փոխելու տեղը ☐☐ [ ]

### Պնդումների փունջ

**31**

| | 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|---|
| Ճիշտ է | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| Սխալ է | ☐ | ☐ | ☐ | ☐ |
| Չգիտեմ | ☐ | ☐ | ☐ | ☐ |

Սխալ նշված պատասխանը փոխելու տեղը

Պնդ. փունջ

**31** ☐

| | |
|---|---|
| Ճիշտ է | ☐ |
| Սխալ է | ☐ |
| Չգիտեմ | ☐ |

**Լրացնում է ստուգողը**

**Ընդարձակ պատասխանով առաջադրանքի միավորը**

**32**

1 ☐

Հանձնաժողովի անդամներ՝

1. ..............................................................

2. ..............................................................

Հանձնաժողովի նախագահ՝

..............................................................

| Միավորների գումարը | |
|---|---|
| Գնահատականը | |